**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ**
**«ԴԱՇՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»**
**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Դաշտի միջնակարգ դպրոց
Ծաղկի փ. 30
հեռ. 099 99 44 44
dasht10@mail.ru
*Մարտի 16, 2023թ.*
N 23

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ,
Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

*Հարգարժան պարոն Հովհաննիսյան*

Տեղեկացնում ենք Ձեզ, որ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի փետրվարի 18-ի N 22-Ն հրամանով «Դաշտի միջնակարգ դպրոցում» առաջացել է դասվարի (16 դասաժամ), մաթեմատիկայի (12 դասաժամ), ֆիզիկայի (9 դասաժամ), տեխնոլոգիայի (4 դասաժամ տղաներ, 4 դասաժամ աղջիկներ ), երաժշտության (2 դասաժամ), ինֆորմատիկայի (5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղեր:

Տնօրեն՝ Ս. Սահակյան

2023 թվականի մարտի «16»

Խոյ համայնք, Դաշտ բնակավայր

**Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի «Դաշտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի 16 (դասաժամ), մաթեմատիկայի (12 դասաժամ), ֆիզիկայի (9 դասաժամ), տեխնոլոգիայի (4 դասաժամ տղաներ, 4 դասաժամ աղջիկներ) ,երաժշտության (2 դասաժամ), ինֆորմատիկայի (5 դասաժամ), ուսուցչի թափուր տեղերի համար:**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրուցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել

-դիմումի (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)

-ինքնակենսագրություն (Ձեւ 5),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ,

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թվականի մարտի 22-ից մինչեւ ապրիլի

4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը՝ 10:00-ից 15:00, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թ. ՝ ապրիլի 6-ին, ժամը 14:30-ին, Դաշտի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Դաշտ, Ծաղկի փողոց 30:

Տեղեկությունների համար զանգահարել՝099-93-44-44 հեռախոսահամարով: